

ԾԱԶԻԿ

ԾԱԶԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար դիմել
Առ Տնօրէն-Հրատարակչին
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պոլիս, Պապը-Ալի ֆասէսի
Էսքի Ջապիէի դրան կից, թիւ 52
درعليه باب عالی جاده سنده اسكي ضبطه
قبوسى اتصالاته ۲۵ نومروده «زاغيك»
غرفه سى مديرى پالاقاشيان حوونان
S'adresser à
HOVNAN PALACACHIAN
Directeur du Journal Arménien «Dzaghik»
Babe-Ali Djaddéssi, N. 25, CONSTANTINOPLE

Լ Ր Ա Ք Ի Ր

40 փարա

Ազգային, Գրական եւ Քաղաքական

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Գ. ՏԱՐԻ, ԹԻՒ 33

Շ Ա Ր Ա Ք

23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1893

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ՝ Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐ Եղիա Էֆ. Տէմիրճիպաշեանի եւ Կենսա-
գրական Մանուկեանի մասին. — Երբայի պատմական գա-
տարանին առջեւ. խաչքանդակ. — Դաւանդարանի գաւառ
— Պոլսոյ պատմական գաւառանի առջեւ. Օր. Վ. Էր-
դինէ Մալիանի ընդհանուր Ազգ. Հիմնադրանքի Տնօրէն
— Հոգն եւ հազարաւոր (հիմնադրանքի համար), Յ. Մ.
Ազնաւորեան. — Ազգային եւ Ներքին լուրեր:

Քանի մը շարաւիտան աղանայ դադարէ
մը յետոյ, այսօր վերադառնալով Կոնստան-
տնուպոլիս «Մալիկ»-ը նորաձոյ տաւերով եւ մերթ-
նայ մերթ պատկերներ եւ զննու մտադրու-
թեամբ: Մեր այս աւար թիւը կը դարձա-
րեմք՝ «Մալիկ»-ի տաւանդաւոր եւ համակրելի
աշխատակցին, Եղիա Էֆ. Տէմիրճիպաշեանի,
պատկերով, այս առթիւ հրատարակելով նաեւ
իւր մասին կենսագրական տեղեկութիւններ
պարունակող զեղեցիկ յոդուած մը, բանա-
սէր բարեկամի մը կարմանէ գրուած:

Երկու լիւր վերջին թիւը սխալմամբ 23 նշանակուած
էր՝ փոխանակ 32 թ. ամսաթիւն այս անգամ, 11 նշա-
նակուած էր՝ փոխանակ 14 թ.:

Մայրաքաղաքի մէջ հնամենի զոյա թիւերը յայ-
տարարուելուն առթիւ. Վ. Գ. Ջապարեանի գրա-
տուած ժողովրդեան համար շորա լուսնեւոր պատրաս-
տել տուած եւ ծրի բաշխեց «Կոնստանտնուպոլիս»
գաւթեան համար Առաջին ջգտ շուրթի նմանը. քաղ-
ուած նշանաւոր բժիշկներու գործերէն: Եւ չէ
հաւանդեալ հայերէն օրինակներէն՝ «Կոնստանտնուպոլիս»
թիւը հետ զգեցնէր մեր գաւառացի բաժանորդաց
այս օրոք ան թիւն հետ ալ կը զրկենք մայրաքաղա-
քի բաժանորդաց:

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԿԵՆՍՏԱՆԳՐԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1851 Մայիս 8ին ծնած է ի Հապլուզի հայ-
րական հասուն Տէմիրճիպաշի Գալուստ աղային
նահապետական տունն, ուր այդ բաղնաճիւղ
զերդաւորանն իր ամբողջութեամբ մէջ կը մի-
անար այն ժամանակ: Իր մանկութիւնը փո-
փոխակի անցած է այդ տան մէջ եւ Պէշիկթաշի
Աւագերէց Տ. Յովհաննէս քահանային տունն՝
որուն մեծապատիւ միջնորդէն մեծապէս ազ-
դուած է Եղիան: Իր զեղեցիկ ճաշակն ալ
սկսած է զարգանալ Հապլուզի տան պարտի-
զին մէջ, անտահման եւ իր բոլոր մասանց մէջ
խնամակալ լիւրստամբ, զուրազեղութեամբ
ու ներդաշնակութեամբ զորս տակաւ կիւ-
րացնէր ազաւայ զեղեցիկարան-բանաստեղծին
հոգին:



ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

տունն, Եղիաի համեմատութեանն ու խորհրդ-
ազգայնութեանն զբաւուելով Դաւանդար-
եան ժամանակաւորաց հետ կրօնական դաստի-
արակութիւն ալ տուած է անոր: Դաւանդար-
եան վարժարանին ուսանող եղած ատեն՝ մի-
անդամայն Անատոլիական թիւան զարդին զա-
մբան հետեւած է Տէմիրճիպաշեան: Ինչպէս
չառ պատանիներ, ինքն ալ զարդին ելնելն
եւրոպական փոփոխութեամբ է Եւրոպա եր-
թալ եւ դրական ու իմաստասիրական ուսմանց
մէջ կատարելագործուիլ՝ վերադարձին իր ծա-
նոթութիւններէն բաժին հանելու համար երկ-
րին եւ ազգին: Այլ իր շուրջն անտարբերու-
թիւն միայն գտած եւ առ յաւել տրամած է:
Եղիային «մեծ արամութեան» ծագումն աստի
է, բնական տրամադրութեանն եւ սրտի վաղա-
հաս յարումէ մը զատ:

Նուազար Դաւանդարեան վարժարանէն ել-
նելով, մտած է Բ. Դրան Արտաքին գործոց

նախարարութեան Տաղարական դիւանն՝ որուն
Տնօրէնն էր Վահանգէս Մաճիա Պէշ: Առաջին
օրէն՝ իր ցոյց տուած յաջողակութեամբ՝ ամ-
ապանի արժանացաւ Եղիան: Տաղարական
դիւանն իրեն համար դրական ուսումնարան
մ'ալ եղաւ, որովհետեւ անյադարար կը կար-
գար Եւրոպական թիւթերն ու հանգչաները՝
որոնք կը գրկուին Տաղարական վերաւանդու-
թեան: Մաճիա Պէշի եւ Պառնասեան Էփէնտի
չփոխն ալ ոչ նուազ նախադասութիւն կը իր
դրական գաւառարակութեան:

Սակայն միշտ տրտում էր Եղիա: Հոգեկան
հիւանդութիւնն իր բնավայրը կ'ընէր. սե խոր-
հուրդներ իր միտքը կը պաշարէին. կը հար-
ցնէր յաճախ ինքն իրեն Մալիկի հոգեկաւոր
հարցումը. «Կեանքը կ'արժէ՞ ապրիլ»: Գիշեր
մը երկար խորհրդածութիւններէ յետոյ՝ ժըլու-
տակուն պատասխան մը տուաւ այս հարցման:
Կամարական Գերդաստանն իր ազատարարն
եղաւ:

Մեղաւորութիւնը փարատելու համար Եւ-
րոպա զրկու եղաւ: Այն զուարթ ազգին Գաղլիան
զրկելէ ընտա ազգեցեալ թիւ մը շունչեղ Եղի-
ային հոգեւոր վրայ: Վերադարձաւ ինչպէս որ
զարգած էր:

Քանի մը տարի կուրծքի հիւանդութենէ
տառապելէ յետոյ, ուսուցչական ու խմբագ-
րական առաջնորդութեան մէջ մտաւ: Գաւառացի
է Հայկական կրթարանն, Հապլուզի Ներսիս-
եան վարժարանը, Նարեկեան վարժարանը,
Միլիտանեան վարժարանը, եւ ուր ուրեմն
Ազգ. Կեդրոնական վարժարանը՝ զոր կը թո-
գու ինքն իր մէջ ամբողջութեամբ աւելի ժամա-
նակ գտնելու համար: Տարիներով «Մալիկ»
օրաթիւ թիւին ու «Թէրճիմանը Էփրեսար» գրա-
կանի խմբագրական ըլլալէ զատ, հրատարա-
կած է Եւրոպական, Գաւառական եւ Եւրոպական
Եւրոպական հանդէսներն, աննախանձաբար եւ
անճշտութեամբ աշխատակցելով միանգամայն
Արեւելեան հանդէսն ու Մալիկ հանդէսներուն
եւ Արեւել, Հարեւել օրաթիւներուն:

Ընդ հանրապէս քիչ խօսող ու զէշ խօսող
է, թէպէտ մեծամեծ ակմբող մէջ երբ խոն-
դակաւի՝ շատ զեղեցիկ կը խօսի՝ հանճարի
փայլակներով ու արախօսութիւններով: Եւ
այն քիչ ու զէշ խօսողը գաւառացիութեանն
ըրաւ է (մերթ ամբին առանց Եւրոպական
միջակ ունենալու), որոց զիւհաւարներու պէս
ծախահարած են Կեդրոնական վարժարանին
բարձրագոյն կարգի ուսանողք՝ յաջողակաւ:
Սակայն իրբեւ գաւառացի կանոնաւոր ընթացքի
մը չը կրնար հետեւիլ, ինչ որ անկեղծօրէն
ինքն իսկ յայտարարած է: Ազգ. Կեդրոնա-
կան վարժարանի խնամակալութեան, երբ
կրթական այդ մեծ հաստատութեան մէջ ի
պաշտօն կոչուած է: Եղիա Տէմիրճիպաշեան

ամեն բանէ առաջ և ամեն բանէ աւելի բա-
նաստեղծ է . ըստ ներշնչման և մերթ ըստ
քմաց կը գործէ :

Գրեւն իր սիրական գրադմանքն է : Եւ
ամբողջ սերունդի մը , ինչպէս որ Գառնիկ էֆ .
Ֆնտզիեան այս էջերուն մէջ խոստովանեցաւ ,
ամբողջ սերունդի մը գրական առաջնորդը
հանդիսացած է իր գրական ընդարձակ հմտա-
թեամբ , իր փայլուն ու բազմաբանգ ոճով ,
իր հարազատ լեզուով և խմատասիրական իր
զարդացած գաղափարներով : Մեր աշխարհիկ
գրականութեան նահապետը կը դառնի զՄա-
մուրեան , և կը յայտարարէ թէ 1880ի սե-
րունդը մեր գրականութեան բարեբաղնիքն
մը կառարկէ առաւել զխաղաղութիւնը մեզնե-
լով կամ գաղափարներով , գրականութեան մէջ :
Անկաղմակապութիւնը , կրքերէ վեր անկախ
գաղափարութիւնն , այնքան հազուադիպաւ յառ-
կաթիւն մեր նոր գրողներուն մէջ , յատկա-
նիւն է այդ ազնիւ գրողին :

Բնատրուի եամբ հեղահամարը է : Բաց
երբ նախանձը կամ շահախնդրութիւնն հա-
լածեն արդար , երբ եղբայրակց մը ձրիա-
բար թշնամանուի , կրակ կը կարի Տէմիրձի-
պաշտան : Թողի մը Թաղաշահ Սորհրդոյ մէկ
անդամն որ մը վարժապետ մը կ'անդառնայ ,
Եղիա կ'իմանայ և «Երկրապետ»ի մէջ իր բոլոր
նողիւնքը կը յայտնէ :

Երբ միայն է : Գիտակցութեամբ կեան-
քին մէջ մարդու միտած չէ : Կը յայտնէ թէ
իրեն իրեն տաղանդակիր երկու խօսք պիտի
բաւէին . «բարի էր , ծանծրայժէ մեռաւ» :

Իր կեանքը կը փախարկէ որ երկար ըլլայ
բոլոր անոնք որք Տէմիրձիպաշտանէ գրական
գործունէութեան ակաճառակու կ'ըսէին : Հիմա
որ ի Հաղիւզ առանձնացած է իր հարաւոր
թանգարանին մէջուկ նստած յիշատակներով
ամենահարուստ հին նահապետական տան մը
մէջ , գրականութեան դեռ սրբա՛ն մեծ ծա-
ռայութիւններ կրնայ մատուցանել իր բա-
նաստեղծի տաղանդութիւններն և իր մտա-
ծութիւններն ի գիր արձանագրելով :

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԴԱՏ ՄԸ

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏՆՕՐԷՆԻՆ ԴԷՄ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Դատի մը «Նկարագրութիւն»ը պէտք
է պարտաւորէ գաղափարներն մէջ ըստած
և աւելի ունեցած բոլոր եղբայրութիւնները
ճշգրտութեամբ , օրինակի համար՝ ընդհա-
նուր գաղափարներն , գանդատարներն ,
ամբաստանեալներուն և վիշտներուն յայ-
տադրութիւնները , գաղափարներն կող-
մանէ առաջարկուած հարցումներն ու
տրուած որոշումները , և այլն , ինչպէս էր
Խաչէրեան Էֆէնտիկներու կողմանէ «Հայ-
րենիք»ի Տնօրէնին գէժ բացումը գաղափար
Ա . Նատին Նկարագրի «Ծաղիկ»ի Յարգ-
թուոյն մէջ , և ինչպէս սկսած ենք հրա-
տարակէլ նաեւ Սպ . Հիւանդանոցի Տեա-
չին գէժ Օր . Մամիկեանի բացած գաղափար
Նկարագրութիւնն :

Լրագիր մը կը մեղանչէ իւր պար-
տուց գէժ և որ և է պարտաւորու չը
կրնար արդարանալ՝ երբ գէտք մը Նկա-
րագրած ժամանակ կը խեղաթիւրէ զայն ,

կողմնակի ընթացք մը կը բռնէ և կամ
մասնաւոր գոյն մը կուտայ անոր : Այս-
պէս բրած է «Հայրենիք» Խաչէրեան Նա-
րագրէն և Յարգանքէն Էֆէնտիկներու կող-
մանէ իւր Տնօրէնին գէժ բացումը գա-
ղափարն առթիւ : Մէկ կողմանէ Նկարագրա-
թեան ձեւ տալ գրաւորին , միւս կող-
մանէ խնդրոյն երեւոյթն այլափոխել ,
այս կը նշանակէ ընթերցողը մոգրեցնե-
լաւ . նպատակ ունենալ , ինչ որ Ներկի
չէ լրացրութեան : Խնդրոյ մը մէջ կամ
բնու մանկու չէ և կամ չեղելու չէ եր-
բէք ճշգրտութեան , ճշմարտութեան : Այդ
լրագրոյ մէջ այս գաղափարն առթիւ կ'ըս-
տարարութիւնը , թէ և Նկարագրա-
թեան ձեւով գրուած , վերջիշեալ կա-
րուար մանրամասնութիւններէն զուրկ
գիտարարար ամբաստանելոյ ուրա-
ցումները միայն կը պարտաւորէին , այն-
պէս որ այդ հրատարակութեանց մէջ
բուն կ'ըլլաթիւնը երեւան չէր գար ,
ամբաստանեալ իր արդար կը Ներկա-
յայտէին , և ապա գաղափարութիւն
մը վրայ գաղափար ընթերցողը չիւթու-
թեան մէջ էր մնային , իսկ պիտի որ
չիւթութեանէն աղաւթու մտօք՝ ի վեր-
ջէն կը յայտարարէր թէ մէկ երկու
տարակի համար էր այդ գաղափարա-
թիւն , այս յայտարարութիւն հակառակ
արդիւնք տալով՝ չիւթութեան ի չիւթ-
ութիւն կը գլորէր ընթերցողներն , որք
գիտէին թէ բոլորն տարակի համար է-
րած չէր :

Ինչպէս ըսինք , գաղափար Ա . Նատին
Նկարագրութիւնը հրատարակելը «Ծա-
ղիկ»ի Յարգ . թուով , իսկ Բ . և Գ . նրա-
տեան Նկարագրութիւնը զանց ընելով
Յարգ . թուով հրատարակելը միայն գա-
ղափար , ինչ ինչ գիտարարութիւններ ա-
ւելցնելով «Հայրենիք»ի բրած հրատա-
րակութեան ձեւին վրայ :

Միտք չունենք այս խնդրոյն վերա-
գաղափար , բայց «Հայրենիք»ի Յարգ
թուոյն մէջ Տնօրէն-հրատարակիչ Յով-
հանէն Էֆ . Շահնապար՝ իւր փառա-
բանին բերնով մեր գիտարարութիւննե-
րէն մին հերքելու փորձ մ'ըրած և
մեր ընթացքը չարամարութիւն անուա-
նած լինելով , պարտաւոր համարելը
զմեզ՝ Ա . Նատին Նկարագրութեան մէջ
պակաս մտայնած մէկ քանի կարեւոր պա-
րագրայները լրացնել և վերջին երկու
նրաւորուն ևս մանրամասն Նկարագրի
և հարազատ պատկերը Ներկայացնել մեր
ընթերցողաց , որք այստ առթիւ կ'ունե-
նան «Ծաղիկ»ի և «Հայրենիք»ի հրատա-
րակութիւնները բողբառակու և վճռե-
լա թէ մը կ'ըլլան է ճշմարտութիւնն ու
անկեղծութիւնը , և մը կ'ըլլան է չարա-
մարութիւնը :

Այս գաղափարութեան Նկարագրին
ամբողջացնել այժմ կարեւոր կ'ըսէն
և այն պարտաւորու որ ի մօտայ առթիւ
պիտի ունենանք հրատարակելու գաղափար
չարանակութիւնն Պարոյ վերաբնիչ ա-
տենին առջեւ , և մեր ընթերցողը պէտք

է կանխաւ ծանօթ կ'ըստ լինին գաղա-
փարութեան նախընթաց պարագայից :

Շահնապարութեան զուրկ չեն այս կար-
գի գաղափար , Նկարագրութիւններ , և
ժողովրդեան համար աւելի հրահանգիչ
ու խրատիչ բնութիւն :

* * *
Ա . ՆԻՍՏ

Գաղափարութեան Ա . Նատին Նկա-
րագրութեան մէջ , զոր հրատարակելը
«Ծաղիկ»ի Յարգ . թուով , հեռուեալ պա-
րագրայները զանց բրած էինք , այժմ կա-
րեւոր համարուած է լրացնել այդ պա-
րաները :

ԳԻՐԳՈՐ ԷՖ . ՁԱՆԱՊՊՊՊ գաղափար Ներ-
կայացնելու ժամանակ ցոյց տուաւ Լե-
ւան Էֆէնտիկի այցեատեմը և գէտքին յա-
ջող օրը Շահնապար Յովհ . Էֆէնտիկ
կողմանէ առ իւր կ'ըլլային Տօք . Բէնիա-
մին Էֆէնտիկ գրած նամակը , զոր Տօք-
թօրը Խաչէրեան Էֆէնտիկ յանձնած էր՝
գաղափարներն ցոյց տրուելու համար , այդ
նամակին մէջ Շահնապար Յովհ . Էֆէնտիկ
կը խոստովանէ՝ առջի օրը տղան տոնե-
լա համար Տիկին Եղիշէն իւր կ'ըլլային
Լեւանին հետ Պարոյ գիւղ երթալը , և
տղան չը յանձնուելով և տիկինը նա-
խատուելով , այս նախատեսաց հաշիւը
պահանջելու համար , Լեւան Էֆէնտիկ
Պարոյ , Խաչէրեան Նկարագրութ Էֆէնտիկ
գրականեալը երթալը և սակայն հան չը
գանելը ու յետոյ իւր գրականեալը
զալը , և ժամը կէսին միջոցները կառ-
թով Բերայէն ճամբայ ելնելով գիւղ եր-
թալին և հան չարամուելը տեսարան
մը պարզուիլը : Ահա՛ այս կերպով , Խա-
րատանելոյ իրենց իսկ խոստովանա-
թեամբ , կը հաստատուի թէ գիշերանց
Խաչէրեաններուն տունը մտած են բռնի ,
և ծեծած ու վիրաւորած են զՅովհ . Էֆ .
Խաչէրեան :

ՇԱՀՆԱՊՊՊ և ԼԵՎԱՆ Էֆէնտիկ այդ
թուով երան իրենց կողմանէ գրուած
լինելը հաստատուելին : Շահնապար Էֆ .
խնդրեց որ նամակին միայն այն մասերը
կարդացուին որք գէտքին հետ կապ
ունին , իսկ բնականեալ խնդիրներու վե-
րաբերեալ մասերը զանց առնուին : ԽԱ-
ՁԱՆԱՊՊՊ և ՇԱՀՆԱՊՊՊ Էֆէնտիկ , որ նայն օրը
գաղափարներն մէջ Ներկայ էր , ըստ թէ
արդէն ինքն ալ նայն բանը պիտի խնդրէր
գաղափարներն :

Ահա առիկ է ևս Էֆէնտիկի այցեատեմին
պատճենը .

«Վաղը ինչուան իրիկուն ժամը 10 ր
կուղեմ որ քրտն վրայ բսած խօսրդ հա-
տանեա , թէ ոչ կը մտածեմ :

ԼԵՎԱՆ Յ . ԿԻՐԿԵՂԵԱՆ»

Ահա առիկ Յովհ . Էֆ . Շահնապարի
առ իւր կ'ըլլային ուղղած նամակին կար-
դացուած մասերը .

«Տօքթօր , այս նամակն կեանքին մէջ
բեղի գրուած վերջին նամակը պիտի ըլ-
լայ . եթէ խեղդ գեռ չես կ'ընդունուած ,
մտիկ ըլլէ : Երեկ Եղիշէն կ'ըլլային հետ

դիւզ կերթան, Միրզան կը տեսնեն և զոր վար տանել բերել կուզեն. այս ալ իրենց մէկ երկու վարդապետներ խրատ տուեր էին ընելու: Տղան հազում միջոցին Օննիկ աղան և Մամբրէն վրայ կը հասնին, Եւգինն ալ, Լեւոնն ալ զուրա կը վառուեն, մինչեւ բազմութեան առջեւ «դուն... մին ես» կ'ըսեն. քեզի զաւակ չեմ տար պառարկով աղան ձեռքէն կ'առնեն: Լեւոնը կրակ կտրած Օննիկ աղային ետեւէն կը վազէ. անիկայ տուն կ'ապրտտանի. գուռը կը գացեն և հազար ու մէկ հայհոյանք: Եւգինը մարմնակալ տուն կը բերէ և ինքը շունչը կ'առնէ Պարիս խաչքրեանին սենեակը՝ այս գէպին վրայ համար պահանջելու: Խաչքրեան գացած էր: Գիշերը ժամը 12ին Լեւոն կտաք մը կը բերէ, զիս միտան կը տանի և կ'երթանը զիւզ: Հոն Խաչքրեանը փնտռած տաննիս, ահա Օննիկ աղա կուգայ առջեւին կը սնկուի: Առտուան ազատ խօսքերը նորէն: Այլ Լեւոնին համբերութիւնը կը կտրի, երբ Օննիկ աղա տնէն զուրա վառուելու կելլայ, տեսարան մը որ չարամուխը:

«Հիմա դուն ի՞նչ միտքդ գրեր ես: Կնկանդ ետեւէն այսպէս շաներ պիտի վազցնես որ երեսն ի վեր «դուն... մին ես» պտան փազցը, մահալէները: Այդ Օննիկ աղային վրայ թքնել չէիր ուզեր, հիմա երբ ես պատուիդ պաշտարանը բերեալ ես անիկայ:

11 Յուլիս 1893

ՕՆՆԻԿ

* * *

Այնուհետեւ Գ. ԶՈՂՐԱՊ Էֆէնտի՝ այն յարձակման կանխատեսածութեամբ գործուած ըլլալը հաստատելու համար՝ հետեւեալ պարագայները թուեց:

1. Յովհ. Էֆ. Շահնազար երբ ցորեկուան գէպը Լեւոն Էֆէնտիէն կը լսէ, փոխանակ իւր եղբորը կողմը բռնելու ուրան այնչափ բարկանալով վազելով է, իրեն թէ նախատինքն իրեն եղած ըլլալ, այնչափ ցաւ և զայրոյթ կ'զգայ որ բանը գործը ձգած, իւր եղբորմէն բաժնուած կնոջը գէտեղած նախատինքնին վրէժը բաժնելու և ողան եղբորմէն տանելով հարսին յանձնելու որչափ կուտայ, և այս նպատակաւ գիշերանց իւր հետ առնելով Լեւոն Էֆէնտիին և ուրիշ անձանքով անձ մը, կտաքով մէկ ու կէս ժամուան ճամբայ կտրելով Պոյաճը գիւղ կ'երթայ, և մինչդեռ կտրելի էր մինչեւ Խաչքրեանց տանը առջեւ կտաքով երթալ, 10 վայրկեան հեռու գաղանի և չը տեսնուելիք տեղ մը կը կեցնէ կտաքը, և հետեւեալ հասարակաց ճանապարհէն ալ չանցնելով՝ պարտիկին մէջէն կուգայ իւր ընկերներով, և մայրաքանդակ մէջէն զուրա կ'ենելով, յանկարծակի տանը գրնէն ներս կը մտնեն, առանց խակ բարեւելու գրանը առջեւ նստողները:

2. Բերայէն մինչև ի Պոյաճը գիւղ եղած հեռավորութիւնն անցնելու ժամանակ իրենց զայրոյթը մեղմացած ըլլա-

լով հանդերձ, իրենց մտադրութիւնը ի գործ կը դնեն:

3. Լեւոն Էֆ. ցորեկը իւր քրոջը հետ Խաչքրեաններուն տանէն վառուելուն առթիւ ստափիկ զայրանալով, զուրա ելնելէն յետոյ Խաչքրեան Յովհ. Էֆէնտիին վաղց կը հրաւիրէ, սպառնալիքներ կ'ընէ և իւր զրկած այցեւորման մէջ այդ ըստառնալիքները կը կրկնէ:

4. Յովհ. Էֆ. Շահնազար իւր եղբորը ուղղած նախախնի մէջ կ'ընէ թէ, Լեւոն՝ Խաչքրեան նաղարէթ Էֆէնտիի գրտանեակը դնայ ցորեկուան գէպին հաշիւը պահանջելու համար:

5. Իրենց հետ կը տանին կտաքի, զինեալ և սճիր գործելու կարող անձանքով անձ մը:

6. Այս անձանքով անձ իրենց հետ ներս կը մտնեն և կուռնին մանակից կ'ընեն, մինչդեռ կը վայլէր որ զուրա սպառնէին զինքը՝ եթէ ծեծելու մտադրութեամբ եկած չէին:

ԶՈՂՐԱՊ Էֆէնտի թուեց նաեւ գործին ծանրացուցիչ պարագայները, որք են.

Ա. Շահնազար Էֆէնտիին՝ հառաքանկաց բարոյական ուղղելու պաշտօնն ունեցող թերթի մը տէրը և խմբագիրն ըլլալը:

Բ. Շահնազար Էֆէնտիին՝ փարիկի խրատագիտական վարժարանէն վկայեալ փառաբան մը ըլլալը, և հետեւաբար գէպին կարեւորութիւնը և օրինական հետեւանքը հասարակ մարդ սցմէ տուելի լաւ գիտնալը:

Գ. Խրատագիտութեան ուսուցիչ ըլլալը (կեդրոնական վարժարանին մէջ) և իւր փառանքով իւր ոչակերտաց բարի օրինակ հանդիսանալու պարտաւոր ըլլալը:

Դ. Եւ վերջապէս, յարձակումը գիշեր ժամանակ և յարձակման եղծակայ ըլլալէ զերծ տան մը մէջ տեղի տնեւոր, և Խաչքրեան Յովհ. Էֆ. անինայ ծեծուելով, հինգ վեց վերքեր ստանալը և այդ վերքերուն 10 օրուան մէջ աղէկեւոր:

* * *

ՅՈՎՀ. Էֆ. ՇԱՀՆԱԶԱՐԱՆԻ յայտարարեց թէ, ինքը Խաչքրեան նաղարէթ Էֆէնտիէն լսած էր՝ Տիկին Եւգինիին Տօրթ. Բէնիամին Պէյէն կաթոլիկ Հայոց Պատրիարքարանի որոշումը բաժնուած ըլլալը և ողան հօրը կողմանէ Խաչքրեանց տանը յանձնուած ըլլալը: Եւ թէ Տիկին Խաչքրեան «Հայրենիք»ի գրտանեակին մէջ ըսած էր թէ, Տիկին Շահնազար երբ որ ուզէ, կրնայ գալ ողան տանել: Անկից մէկ քանի օր յետոյ երկու վարդապետներ Տիկին Եւգինիին կը հասկցնեն որ ինք տարաւէն վար ողան խնամել մօրը իրաւունքն է, ուստի ողան կրնայ առնել, և շատ ճիշդ է, և պէտք էր որ Խաչքրեանները ողան մօրը յանձնէին: Տիկին Եւգինիէ տակ խրախուսեալ և Տիկին Խաչքրեանի խոստումներ վրայ վստահ, եղբորը Լեւոնին հետ Պոյաճը գիւղ կ'երթայ ողան տանելու, և հոն կը մերժուի

ու կանաչատուռի: Գիշերը երբ ինքը ողան ուզէր է, նաղարէթ Էֆ. մերժէր է յանձնել՝ առարկելով որ ողան հօրը կողմանէ իրեն յանձնուած է և չը կրնար պատասխանատուութեան տակ մնալ, մինչդեռ իբր օրէնագէտ գիտէր անշուշտ որ ողան յանձնելով՝ ո՛չ տուգանքի և ո՛չ պատժոյ կ'ենթարկի:

Լեւոն Էֆ. Կիւրճեմէն յայտարարեց թէ, իւր այցեւորման մէջ գրուած «կը մտածեմ» բառը իբրեւ սպառնալիք կամ գիշերը մենամարտի հրաւիրելու մտօք գործածուած չէր, այլ պարզապէս դատարանի գիմելու յայտարարութիւն մ'էր:

* * *

Բ. ՆԻՍՏ

Բ. նիստը տեղի ունեցաւ Օգոստ. 26, հինգշաբթի օր: Ներկայ էին Խաչքրեան Յովհ. Էֆ. և իւր փառաբաններէն Գրիգոր Էֆ. Զօհրապ, Շահնազար Յովհ. Էֆ. և իւր փառաբանն Թորոս Էֆ. Սարաճ, Լեւոն Էֆ. Կիւրճեմէն և իւր փառաբանն Գրիգոր Էֆ. Մինէճեան, Բնդ. Դատարագի Օղնական Նէշադեան Գարիբէլ Էֆէնտի:

ՆԱԽԱԳԱՀՐ նախ և առաջ հարցուց Շահնազար Էֆէնտիի բնակութիւնը. պատասխան տուցաւ թէ այժմ Հէյալէի կղզին կը բնակի, իսկ գէպին ժամանակ կը բնակէր ի Բերա, Լինսօքի փողոց, թիւ 17:

Ապա կարգացուեցաւ նախորդ նստին տեսնալութիւնը, որուն վրայ Սարաճ Թորոս և Մինէճեան Էֆէնտիներու ինչ ինչ դատաւարութիւնները լսուելէ յետոյ, կարգացուեցաւ նաեւ Տիկին Զարուհի Խաչքրեանի յայտարարութեան արձանագրութիւնը՝ որ ահաւասիկ.

«Գէպէն քանի մ'օր առաջ, քրոջս կողմանէ Արիւար Էֆէնտիի յանձնարարուած մէկ գործը իրեն յիշեցնելու մտօք՝ «Հայրենիք»ի խմբագրատունը գնացի. տեսայ զինքը և այդ գործն իրեն յիշեցուցի. հոն կը գտնուէին նաեւ Շահնազար Յովհ. և Կիւրճեմէն Լեւոն Էֆէնտիի և Լեւոն փաշայեան անունով մէկը. ամենուն հետ ալ տեսնուեցայ. Շահնազար Էֆ. հարցուց ինձ թէ վաճանը մեր քովն է՞. «Այո», մեր քովն է, հայրը խնդրեց որ մինչեւ գարոցին բացուի մեր տանը պահենք, ողան կը մեղքնամ կոր տուանց ծնողքի մնալուն համար» պատասխանեցի: Շահնազար Էֆէնտիին կը ճանչնամ, մեր տանը կուգար, բայց տարիէ մը ի վեր եկած չունի. Տիկին Շահնազար ձմեռուքնէ ի վեր եկած չունէր. արդէն ամառինս պատուիրած էր որ յիշեալ կինը տուն չընդունիմ, եայլն: Գէպին օրը, կէս օրէն վերջ, Տիկին Շահնազարեան իւր Լեւոն եղբորը հետ հոս մեր տանը (ի Պոյաճը գիւղ) եկաւ, «Պատրիարքարանէն թուղթ ունիմ, ողան կ'ընամ տանիլ» ըսելով, ողան պահանջեց. պատասխան տղան վար բերաւ և հազուեցնելու վրայ էր, Խաչքրեան Յովհաննէս Էֆ. որ այն օրը տանը կը գրաւուէր, չուղեց ողան յանձնել. «ողան հօրը կողմանէ մեզ յանձնուած է և առանց անոր հրամանին չենք կրնար թուղթը որ տանիլ» ըսաւ. ասոր վրայ՝ Լե-

ւան էֆ. «տախկայ մայրն է, ողան ուղե-
լու իրաւունք ունի» ըստ և սկսաւ նա-
խառանգան խօսքեր ընել. նոյն միջոցին
վրայ եկաւ. ամուսնոյ մեծ եղբայրը՝ խա-
չէրեան Մամբրէ աղան և վէճին պատ-
ճառը հասկնալ ուղեց. առ այս՝ Տիկին
Շահնազար «եղբայր մօրիկ ըրնի, քեզի
ալ մօրիկ չենք կրնար ընել» ըսելով, հո-
վանոցը՝ վերջոյց և զլեւան զարնելու
սպառնալիք ըրաւ. այն առեւ խաչէրեան
Յովհ. էֆ. «այդէն դուք անպատիւ կին
մին էք» ըսաւ. Տիկին Շահնազար և
Լեւան էֆ. ստատիկ զայրացան և գալստ
եղան. ես ալ գալստ ելայ. Լեւան էֆ.
Յովհ. էֆէնտի համար ըսաւ թէ «գո-
հացում կ'ուզենք, եթէ ոչ անոր կը
հասկնանք». նոյնպէս Յովհ. էֆէնտի
ստալու համար այցեւորան մը յանձնեց ինձ
որուն վրայ գրեց. «եթէ մինչև վաղը
գոհացում չտաս, ես ընելիքս գիտեմ». և
այսպէս բաժնուեցանք իրարմէ. ես այն
այցեւորանը ամուսնոյս տուի:

«Նոյն գիշերը, Ժամը 20. կէսին միջոց-
ները, երբ ամուսնիս խաչէրեան Նազար-
էթ էֆ. վերը կը քնանար և ես ալ
սպառը պառկեցնելով՝ վարը հիւրերուս
հետ նստած էի, Շահնազար Յովհ. և
Կիւրեղեան Լեւան էֆէնտիք՝ հետերին
ուրիշ սննդ մ'ալ ունեւորով՝ տանը գի-
մացը գտնուած սրտախիլին եղերի մա-
ցառներուն մէջէն ելնելով և զէպի մեզ
զարկով, առանց բան մ'ըսելու՝ ազգակի
տունէն ներս մտան, և հոն, բակը, Շահ-
նազար էֆ. ամուսնիս հարցոյց սպա-
սուհի Ֆրոստոյին, որ պառկած ըլլալը
յայտնեց. այդ միջոցին ես ալ իրենց քով
եկած էի. Շահնազար էֆ. աղան հար-
ցոյց. «պառկած է» ըսի. ճիշդ այդ բո-
ւղէին մեր քով եկած էր նաև խաչէրեան
Յովհ. էֆէնտին. Շահնազար էֆ. բար-
կաթեամբ խօսքն անոր ուղղելով, «Եւ-
զինէին հետ ունեցած վարձանքնիդ
վայելից» ըսաւ. «Թո՛ղ չըսեր ու չըսեր»
պատասխանեց խաչէրեան Յովհ. էֆէն-
տի. տաք վրայ՝ Շահնազար էֆէնտի
«տախկան կը գրուցե՞ս կոր» ըսելով,
գաւազանով խաչէրեան Յովհաննէս է-
ֆէնտիին զարկաւ, սակայն այս միջոցին
մէկ կողմ քաշուած ըլլալով, չը կրցայ
տեսնել թէ հարուածը ո՞ր տեղին եկաւ.
անմիջապէս Շահնազար և Լեւան էֆէն-
տիները և իրենց հետ եկած անձանքով
անձը խաչէրեան Յովհ. էֆէնտի վրայ
յարձակելով սկսան անխնայ ծեծել. Շահ-
նազար էֆէնտիին ստալով զարնելը տե-
սայ. խաչէրեան Յովհ. էֆէնտիին ձեռքն
ալ խածեք է, բայց ասիկայ աչքովս չը
տեսայ, հարերէն ըսեցի. Լեւան էֆէն-
տիին ալ զարնելը տեսայ, բայց ի՞նչով և
ո՞ր տեղին զարնելը ճշգրիտ չեմ կրնար սր-
շել: Այս տախկան վրայաթեան միջոցին,
հիւրերս, այսինքն Մարկոս և Յակոբ էֆէն-
տիներն և ուրիշներ, իսկոյն ներս գալով
ծեծողները մէկդի առնելու աշխատեցան.
այս միջոցին ես վեր ելայ, վառն զի սպառը
կուլային. այնուհետեւ վարը թնջ եղաւ չեմ

զիտեր. յետոյ երբ դարձեալ վար իջայ
և հիւրերուս հետ նստած էի, սպասու-
հիէն ըսեցի որ Նազարէթ, Շահնազար և
Լեւան էֆէնտիները զէպի պարտէզը գա-
ցեր են. քիչ յետոյ վերադարձան և ա-
մուսնիս Նազարէթ էֆ. «տախկան կան-
չեցէք» պառաց. Շահնազար էֆէնտիին՝
իւր գաւազանը ուղած ըլլալը չեմ գի-
տեր. երեք ծեծողները՝ տանը գիմացի
ծառին քով կեցող կառքը մտան և գա-
ցին:»

* * *

ՄԻՆԵՃԵԱՆ ԷՖ. պահանջեց որ վիշաբ վե-
րադին ըսին, որպէս զի կարող լինի անոնց
վիշաբիէան մասին իւր ասարկութիւններն
ընելու, վառն զի անցեալ նախին ինք սակա-
ւին կարգուած չէր փոխանորդ, իսկ իւր փո-
խանորդեան անկարող էր առ այդ:

Նոյն պահանջումն ըրաւ նաև ԹՈՐՈՍ Էֆ.:
Սոյն երկու փաստաբանը, Շահնազար և Լե-
ւան էֆէնտիներու հետ Պոլսոյ գլխ. գնա-
ցող և «անձանք» ըսուած անձին գտնուած
և ունեցողաց մէջ ներկայ լինելը յայտնեցին
և պահանջեցին որ անոր գտնուած միւս ամ-
բաստանեցող գտնին հետ ի միասին և ևս ուրիշ,
քանի որ անոր գէմ ալ բողբոջած կամ գաւա-
րացուած է, աւելցուցին թէ՛ եթէ անոր գէմ
գտնուած ալ չըլլայ, Ընդհ. գաւառա-
գին պարտքն է բանալ, եթէ ոչ օրինական
թէրաթեան մը մէջ գտնուած կ'ըլլայ:

ՁՕՀՐԱՊ Գ. ԷՖ. և ԸՆԴՀ. ԴԱՏԱԽԱՂԸ
պատասխանեցին թէ, անձանքն անձին գէմ
տաւցմի գտն չէ բացուած, ամբաստանա-
ղիքը միայն Շահնազար Յովհ. և Լեւան Կիւ-
րեղեան էֆէնտիներու գէմ խնայուած է,
և անոնց հետ՝ զէպրին ժամանակ՝ անձանքն
անձ մը գտնուելը դարցուած է միայն բո-
ղբոջներուն, ինչպէս և ամբաստանեալներուն
կողմանէ: Իրաւ է թէ խնայող մը համար ամ-
բաստանուած անձանց գաւառ չը գաւառիր,
բայց երբ անձին նոյնութիւնը շատուած
անձանքին մը գէմ սակաւին գաւառ չէ բաց-
ուած, այս՝ մեղադրեցներու գաւառ գտնել չը
նշանակէր: Օրինական արամադրութիւն մը
չը կայ որ պարտաւորէ բնդ հանար գաւառ-
խաղերը՝ ամբաստանեալներու կողմանէ իր-
բեւ մեղադրից ցոյց պարտած անձանց նոյնու-
թիւնը շատուած՝ գաւառ բանալու անոնց գէմ:
Գաղով վիշաբներն, քանի որ ասանք անգամ
մը լուսեցան ի ներկայութեան ամբաստանե-
լոյ, այլ ևս ոչ պէտք և ոչ պատճառ մը կայ
վերադին ըսելու գտնուած, մանաւանդ որ ան-
ոնց վիշաբիէանց մանրամասն արձանա-
գրութիւնը կարգացուցաւ արդէն այս նրա-
տին սկիզբը:

ՆԱԽԱԳԱՀԻՆ հրահանաւ, այլ «անձանք»
ըսուած անձը գաւառան ներկայացաւ: Մի-
ջահատակ, կարմաղէմ և կորովի երիտասարդ
մէք, գաւառացիի զխնայծութեամբ: Իրեն
ուզուած հարցման պատասխանելով, յայտ-
նեց թէ անունն է Յարութիւն, և սպասու-
որ է Բերա, Լինարտի փաղոց, թիւ 17 տան
մէջ, Ֆրանչիսքի քով:

Դատարանը՝ պահ մը խորհրդակցելէ յե-
տոյ՝ յայտարարեց թէ, ոչ անձանքն անձը
գաւառն մէջ մացներու և ոչ ալ վիշաբները վե-
րադին ըսելու պէտք կայ: Ուստի «անձանք»
անձը գաւառանէն դուրս հանուեցաւ:

Այնուհետեւ կարգացուեցաւ քննիչ բժշ-
կին երկու տեղեկադրները.

1. «Քննելով խաչէրեան Յովհ. էֆէնտին,

որ քանի մը օր առաջ վերքեր առած էր,
զլիւսուն աջ քունքին վրայ տեսայ ճմլումն
պատճառող գործիքով յառաջ եկած փոքր կա-
պոյս հարուածանշան մը, և աջ տկանքին խո-
րանին յետին կողմին վրայ՝ փոքր ճմլած մը:
Նոյնպէս, աջ ձեռքին ճկոյտ մասին առաջին
յօդուածին առջևի կողմերուն վրայ տեսայ
լուսնալու վրայ եղող երկու հատ սկաւայի
վէրք, և ձախ ազդրին արտաքին մասին վրայ
ճմլումն պատճառող գործիքով յառաջ եկած
հարուածանշան մը հաստատեցի: Խնամուկ
և 8 օր յետոյ վերադին քննուկ հարկ է: 13
յուլիս 1309:»

2. «Յիշեալ էֆէնտին գարձեալ քննելով,
ստուգելի որ առաջին տեղեկադրին մէջ նշա-
նակուած վէրքերն, ճմլածները և հարուա-
ծանշանները 10 օրուան մէջ և 100 գրուշ
վարձով բուժուած են: 21 յուլիս 1309:»

ՆԱԽԱԳԱՀԸ երկու կողմերուն հարցոյց յե-
տոյ թէ ուրիշ բեկիք ունին: ՁՕՀՐԱՊ Էֆ.
պատասխանեց թէ արուած վիշաբիէանք և
յառաջ բերուած տաղացոյց բաւականէն աւելի
են ներկայ գտնին սպառ լինելն հաստատե-
լու: ՍԱՐԱՃ ԹՈՐՈՍ և ՄԻՆԵՃԵԱՆ ԳՐԻԳՈՐ
էֆէնտիք յայտարարեցին թէ, իրենց պաշա-
պանողական ճառերն արտասանելու ժամանակ
սկիսի յայտնեն վիշաբի նկատմամբ իրենց ու-
նեցած ասարկութիւնները:

(ԴՐՈՒՆԻՒՄ)

ՊԱՏԺԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻՆ ԱՌՁԵԻ

ՕՐ. ՄԱՎԵԱՆ ԸՆԴԴԷՄ Ս. ԷՖ. ՓԱՓԱՉԵԱՆԻ

ՆԻՍՏԲ. ԵԻ. Գ.

Ա. Նախին նկարագրութիւնն ըրինք «Ծա-
ղիկ»ի 32րդ թիւով: Դատար չարանակուեցաւ
Բ. և Գ. նիստերուն մէջ, որոնք տեղի ունեցան
Սեպտ. 16ին և Հոկտ. 5ին: Բ. նախին ներկայ
էին ամբաստանեալն՝ Հիւսնոյ անոնցի Տիւրք
Սարգիս Էֆ. Փափաղեան, ամբաստանուոր Օր.
Վերդին Մալեան և սորա փաստաբանն Գե-
ղուշ Էֆ. Պիւրլիսեան: Գ. նախին ներկայ էին
Օրիսարը և Տիւրքը, իսկ Պիւրլիսեան Էֆ.
բացակայ էր:

Բ. նախին իրբեւ վիշաբ ներկայացան Հի-
ւսնոյ անոնցի պաշտօնականներն հիւսնոյ պաշա-
պետ Նշան, Դեղադարձ Մանուկ, չորասպան
Մկրտիչ և Թորոս, Դեղադարձ Միքայէլ և զրազիր
Խաչիկ: Հինգն ալ Ս. Աւետարանին վրայ եր-
գում ընելով յայտնեցին թէ Օր. Մալեանի
ծեծուկը չէին տեսած:

Գ. նախին իրբեւ վիշաբ կաշուած էին Տօբ.
Նահապետեան, վիշաբոյցի օգնական Ռոստո-
յոցի Սարգիս, զրազիր Թալեան և լուսարար
Հաճի Արթիւր: Ասանք ալ Ս. Աւետարանին վրայ
օրինական երգումն ընելէ յետոյ, հետեւեալ
կերպով վիշաբեցին իրենց զիւրցածը:

ՏՕԲԹ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ. — Ծեծուկը չը
տեսայ, ոչ ալ ըսեցի (1), բայց երկու ամսոյ
չափ այս օրիսրդին հիւսնոյ օրինակը գտնու-
ած եմ: Զոյցին հիւսնոյ օրինակն ունէր:

(1) Օր. Մալեան կը պատմէ թէ՛ իրեն քաշկըւտ-
ուելը Տօբ. Նահապետեան հիւսնոյ պաշտօնա-
նէն տեսնելով, «այս ի՞նչ անգթութիւն է» պառա-
ցեր է: Տօբ. թորը վիշաբ թախանձողին խնդրեք է Օր.
Մալեանէն որ իւր անուշը գաւառանին չը յայտնէ իւ-
րեւ տկանաւան:

ՆԱԽԱԳԱՀ. — Օրերս չէր հոն պաշտօն ունէր թէ՛ հիւանդ եկաւ:

ՏՕԲ. ՆԱԽԱԳԱՀ. — Չեմ գիտեր:

ՌՈՏՈՍԹՈՅԻ ՍԱՐԳԻՍ. — Հիւանդանոցին զիմացի պարտէզը դաշտէն էի ազատ փրցնելու. երբ զէպի ջրհանը կուգայի աղցանը լուարու, բազմութիւն մը տեսայ. լսեցի որ աղջիկը լեզուին կուտար. Տեսաւ ալ ձեռքը վերցնելով քանի մը հաստ դարկաւ երեսին, մէկ հաստ ալ ծոծրակին. ես սոսկահետեւ ձգեցի ներս գացի, սրպէս զի Տեսաւ ձեռքս չը տեսնէ աղցանը: Յետոյ եկայ Հիւանդանոցին կամուրջին վրայ նստայ: Հիւանդապահապետ Նշան ազան եկաւ քովս, ախտ մ'առաւ նրա տաւ, քրտնքը սրեց, սիկտայ շինեց: Սկիսեալ մ'ալ ես ուղեցի: Ինչ է այդ, այդպէս քրտնած սրկէ կուգաս, բա՛ւ: «Նազըրին զէմ եկողը հէմ տանել ձեռն կ'ուտէ, հէմ յիմարանոց կ'երթայ», պատասխանեց (1):

Ս. ՓԱՓԱՋԵԱՆ. — Այս մարդը Հիւանդանոցէն հանած էմ, ե ինքը վերջերս դարձեալ պաշտօն առնել ուզած է. քովս նամակներ ունի. գործ չը տալու համար հետ թնամացած է, ուստի իւր վիշտով ինչը չեմ ընդունիր:

ՆԱԽԱԳԱՀ. — Նամակներն ուղիւղել առաւ. ե հրամայեց յղել թաղ մանուկեան:

ԸՆԴ. ԳՍԱՍԱՍԱՋ. — Այստեղ մեր պարտքն է վերջները լսել եւ բաւ այնմ համարում գոյացնելով որչափ տալ. եթէ վիշտներն զէմ բողբ մ'ունի, կրնայ յետոյ առանձին գաս մը բանալ:

ՆԱԽԱԳԱՀ. — (առ Ռոտոսթոյի Սարգիս). — Հիւանդանոցէն ելած ես:

ՍԱՐԳԻՍ. — Այո՛, բայց ես ինքս հրամարած էմ: Իրեն նամակ մը գրեցի եւ հայրենիք երթալու համար արձակուրդ խնդրեցի. երբ թող չը տուաւ, հրամարեցայ: Հայրենիքէն դառնալէ յետոյ, իրեն նամակ մը գրեցի եւ վերադառնալու պաշտօն խնդրեցի: Ահա՛ այդ երկու նամակներն են որ հիմա գտաւարանին կը ներկայացնէ:

ՆԱԽԱԳԱՀ. — Հիմա պարտաւ ես:

ՍԱՐԳԻՍ. — Ո՛չ, Բերայի Ս. Յակոբայ Հիւանդանոցին մէջ պաշտօն տուած էմ:

ԳՐԱԳԻՐ ԹՈՒՄԱՅ. — Ես գործելը չը տեսայ, բայց բազմութիւն մը տեսայ:

ՆԱԽԱԳԱՀ. — Այս աղջիկը Հիւանդանոցին մէջ պաշտօն ունէր:

ԹՈՒՄԱՅ. — Ո՛չ, պատասխանեալ էր:

ԼՈՒՍԱՐԱՐ ՀԱՃԻ ԱՐԹՅՆ. — Օր. Մալեան ձեռք կ'ունենէ մը ձեռքէն բռնած՝ հիւանդանոց կը տանէր, սրպէս զի իւր հիւանդ տղան տեսնէ. Տեսաւ զորս եկաւ. «Ի՛նչ կը տանիս կոր, ի՛նչ կը խառնուիս առանձի բաներու», պատայ: Ես այդ միջոցին մտածեմ կ'երթայի եկեղեցւոյ այն վերաբերեալ մանր մունր բաներ տանելու: Անոնք բանախոսի սկսան: Ես պէտք եղած բաներն առի, եկեղեցի տարի: Յետոյ զիմացի պարտէզը գնացի՝ եկեղեցւոյն համար ծաղիկ ժողովելու, վառն զի յաջորդ օրը տուն էր: Ծաղիկ ժողովելու վրայ էի, աղմուկ մը լսեցի եւ բազմութիւն մը տեսայ: Այս բազմութեան մէջ էր Տեսաւ զորս ձեռք վերցնելու տեսայ, բայց զարնելը կամ որու գարնելը չը տեսայ: Տեսայ միայն որ յիմարտալ հշանիկ աղան մէջ մտաւ. ե թեւովը Տեսաւ մէկը ընկելով՝ աղջիկը ապտակեց: Յետոյ շորա-

պահ Մկրտիչ և Թորոս՝ աղջիկը հըրմըտեալով յիմարանոց տարին (1):

ՆԱԽԱԳԱՀ. (առ Ս. Փափաճեան). — Ի՞նչ բռնիք ունիք:

Ս. ՓԱՓԱՋԵԱՆ. — Այս մարդն ի՛նչ բռնիք չը գիտեր, վառն զի հիմա պաշտօն չունի Հիւանդանոցին մէջ:

ՀԱՃԻ ԱՐԹՅՆ. — Հիւանդանոցէն ես հրամարած էմ, ե հիմա ալ պարտաւ չեմ. Մայր եկեղեցւոյ մէջ նոյն պաշտօնը կը վարեմ, այսինքն լուսարարութիւն:

ՆԱԽԱԳԱՀ. — Հարցոյց Օր. Մալեանի թէ բռնիք մ'ունի:

ՕՐ. Վ. ՄԱՎԵԱՆ (յուզեալ). — Տէր նախագահ, փաստաբանս բացակայ է եւ ես չը պիտի կրնամ դատաւելաք եղածին պէս ներկայացնել, մանաւանդ որ Օսմանեան ալ լաւ չեմ կրնար խօսիլ: Այս մարդը (Հիւանդանոցին Տեսաւ զորս ցուցնելով) բաւական տարիքու մարդ է, այս պատճառաւ վրան նայողը ծանրաբար չեմ կրնար կարծի վրեք ե իրմէն գէշութիւն մը չը յուսար, բայց ախարհի առէն գէշութիւն կայ իւր վրան: Ես երկատարող աղջիկ մ'ըլլալով, չեմ համարձակիր Հիւանդանոցին մէջ լրանալ առէն խառնառակութիւնները պատմել. պատմել կարենալու համար երեսու գիմակ մ'անցուցելու կամ 60 տարեկան կին մը ըլլալու եմ...

Չայս բառ Օր. Մալեան յուզեալ եւ սկսաւ լալ:

ՆԱԽԱԳԱՀ. — Աղջիկս, մի՛ յուզուիր, հանդարտ, նստ, քիչ մը ե ծանր ծանր խօս:

ՕՐ. ՄԱՎԵԱՆ (վերադառնալ խօսիլ սկսելով). — Ես իմ պաշտօն Հիւանդանոցի մէջ խղճի մտք կը կատարէի, չեմ գիտեր թէ այս մարդն ի՛նչու համար սիւ պահած էր ինձ գէմ. առէն գործի մէջ գէմն զժողովութիւններ կը հանէր, օրինակի համար՝ Հիւանդանոցին մէջ ձեռնակեցէն կը ձեռնէի. կարի մեքենային համար տեղ պէտք կ'ըլլար, չէր տար. տեղը զժողովութեան կ'առնէի, գերծան չէր տար, եայլն. իր նպատակն էր զիս յուսահատեցնել եւ Հիւանդանոցէն փախցնել, վառն զի իմ հոն ներկայութիւնս առանձին էր իրեն համար: Ես ալ զայս գիտնալով, միտքս դրած էի չը յուսահատել ե ծառայութիւններս շարունակել: Կանանոցը կուգար եւ հիւանդանոցին մէջ կ'ընկնէին հետ ծառանակ կ'անցունէր. օր մը զիս զուտածով հոն գտնուեցայ, «Հայտէ գոյրատուն» բռնով զիս փնտռեց: Տօք թոր (Տօք. Նահապետեանը զայս տալով) հոս է, առէն բան գիտէ, թո՛ղ գրուցէ. ինքն էր որ առէն տեսնէ կուգար շնորհակալութիւն կը յայտնէր ինձ՝ պաշտօնս ազգի կատարելու համար: (Աս Տօք. Նահապետեան) չը գրուցէ՞ր, առք թէ օր, ի՛նչու կը լսէք:

Ս. ՓԱՓԱՋԵԱՆ. — Օրերս չէր վերջին անգամ Հիւանդանոց գալէն 7 ամիս առաջ անգամ մ'ալ եկած էր. ինքը կարօտ չէ, ե տան մէջ հանգիստ չը կենարուն համար էր որ զինքը Հիւանդանոց կը գրկէին: Ինքը քովս նամակ ալ ունի:

ՆԱԽԱԳԱՀ. — Ես նամակը եւ հրամայեց յղել թաղ մանուկեան. յետոյ հարցոյց. Հիւանդ եկաւ նէ, հրամանադրով եկաւ:

Ս. ՓԱՓԱՋԵԱՆ. — Ո՛չ, այդ նամակով ինքնիկնէր եկաւ, ես ալ ընդունեցի:

ՆԱԽԱԳԱՀ. — Դուռնէն առէն եկող հիւանդը կ'ընդունիր:

(1) Այս այն Նշան ազան է որ Բ. Նաթան լէջ Ս. Աւետարանին վրայ երջում ընկելով բառ թէ բան մը չէ տեսած, բան մը չէ լսած, բան մը չը գիտեր:

(Ծ. Խմբ.)

Ս. Փ. — Այո՛, հիւանդանոց է, ով որ գայ դուռնէն իրեւ հիւանդ, կ'ընդունիմ:

ՆԱԽԱԳԱՀ. — Այն տեղ պաշտօնեայ ընդունելը կամ ճամբելը ձեռն ձեռքն է՞:

Ս. Փ. — Այո՛, ուղած մարդուս պաշտօն կուտամ, չուգածս կը ճամբեմ: (1)

ՕՐ. ՄԱՎԵԱՆ. — Ընդ է Տեսաւ չին սա խօսքը թէ 7 ամիս առաջ անգամ մ'ալ Հիւանդանոց գալէն էի, ե այն ժամանակ հիւանդ էի: Ես կարօտ չեմ եւ Հիւանդանոցին հայն ուտելու համար չէր որ երկրորդ անգամ հոն գացի, այլ պարզապէս խեղճերուն ծառայելու համար. փառք Աստուծոյ, քիչ շատ դրամ ունիմ եւ կրնամ դուրսը ապրիլ. Հոգարարձուներն ալ տեսնէ որ կրնամ Հիւանդանոցին մէջ օգտակար ըլլալ ե ինձ պաշտօն տուն. ինքզինքս խեղճերուն նուիրելու որոշումս անոր համար էր որ հայրս միշտ գիտով վիճակի մէջ տուն կուգար՝ փողոցները զլորելով, ե ես կամրջնայի, ամիսներով զլուխս պատահանէն դուրս չէի կրնար հանել. այս ե յարակից պատճառներով տունը զգուշելու եղած էր ինձ ե ես ինքզինքս գործող կը համարէի. ուստի որոշած էի քաշուիլ ե զիս նուիրել Հիւանդանոցին մէջ պատասխանալ խեղճերուն ծառայութեան: Դժբաղդաբար հոն ալ այս մարդը հանգիստ չը թողուց զիս, ե իւր կիբը յաղեցնելու համար վերջ ի վերջոյ գանակոծեց զիս՝ քանի մ'ամիս հիւանդացնելու ատիճառ: Այդ գէպքին ականատես են Հիւանդանոցին բոլոր պաշտօնեայք, բայց կը վախճան ճամբարտութիւնն ըսելու:

Դատին շարունակութիւնը յետաձգուած է նոյ՛. 17, չորեքշաբթի օրուան:

ՀՈՂԸ ԵՒ ՀՈՂԱԳՈՐԾԸ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳԻ ՀՈԿՏԵՐԵՐ ԱՄՍՈՅ

ԲԱՆՁԱՐԵՂԻՆՍՑ ՊԱՐՏԵՉ. — Պատերու եկերք եւ հարստային հոգմոց (լոտոս) գէմ ցանցեք առէն տեսակ հարստերու (տալաթալը մարու), աղցաններու, սպաննախի ե քեղաւորութի սերմերը. մէկ մէկ մասի հաստութեամբ աղբով ծածկեցէք զանոնք՝ տալահովիտ համար մոտապատ սառցանքներն ե կեղամներն: Լեզրդ ակները (հինգիպա) առնէն առելի ցուրտի զիմացով տունիկէն են. ուստի խոհեմութիւն է պահել զանոնք ու ձերմկցնել: ձերմկցնելու համար՝ ծածկեցէք զանոնք երկայն խոտերու արով: Կը ձերմկին նաեւ, եթէ կըմնաներու ե կամ լայն ապիստակներու տակ առնուին, կանոնադրապէս առնելու զիւրքին մէջ զանոնք լեզրդ ակները: Այլ ես հանցեցէք գետնէ բանջարներն, սակաւ զիններն ե բողկերն: Մաքրեցէք ծներեկի արտերը՝ մէկը ի տանելով, եթէ անոնք խորունկ թաղուած են, երեսը գանուած նուրբ հողը, զոր պէտք է խառնել լաւ մը փռած աղբի հետ, իսկ եթէ սերմը երեսանց ցանուած է, այն տանն կը բաւ խառնել աղբը միայն: Այս ամոց մէջ կը անուրիս նաեւ կանկարի ե պրատի տունիկերն: Փորեցէք, խնամք տարէք ուժովցնելու պարագ մնացած գետնիք. ջանք ե ճիգն մի՛ խնայէք առէն կերպով պատրաստ ընելու զայն: Թարմ աղբն ալ հարկաւոր է բանջարեղինաց պարտիկին համար, մանաւանդ յառաջիկայ եղանակին մէջ. ուստի լաւ կը լինի զայն ես այժմէն պատրաստելու սկսիլ:

(Ծ. Խմբ.)

ԾԱՌԱՍՏԱՆՔ. — Պատուիրել շատերը, տանձ, խնձոր, սերկեւիլ, բնիդղ, հայն, այս ամսոյ մէջ կը քաղուին. ուստի կատարեալ զգուշութիւն պէտք է չը վստահելու համար՝ չ'ը ծառերուն և ո՛չ ալ պտուղներուն. զգուշութիւն ընել մանաւանդ որ պտուղներն՝ քաղուելէն անմիջապէս ետքը՝ իրարու վրայ չդիպուին. պէտք է զանոնք մէկ քանի օր փռել իրարմէ հեռի. քառաջին պարագային մէջ շատ հաւանական է որ պտուղներու մեծ մասն փտաի: Հոկտեմբերը նոր ծառեր տընկելու յարմարագոյն ամիսն է. յաջորդ ամիսներու մէջ տնկուած ծառերն առկա ապարդիւն կը մնան. ժիր հողագործին կը մնայ ուրիշն օգտուիլ յարմար ժամանակէն: Հին ծառերն ալ անմիջական խնամոց կը կարօտին այս ամսոյ մէջ. մէկզկի առէք անոնց փտած ճիւղերն, քերեցէք և մաքրեցէք հին կեղեւները: Եթէ օդերը չոր երթան, վեր'ն ի վար ջրեցէք նոր տնկուած ծառերն. պէտք է զխառաղ սակացն որ հարկ չկայ ջրել այն ծառերն, որք խոնաւ կամ սարկուտ քաղցր կը ամուլուն: Հոկտեմբերի մէջ կը տնկուին նաեւ ամէն տեսակ միւրգերու չիւսերն: Ներկայ ամսոյ մէջ ներկի չէ բնաւ ջրել հին պտղատու ծառերն, ինչպէս նաեւ նորերը չտիւնն աւելի ջրելը:

ԾԱՂԱՆՅՑ ՊԱՐՏԵՂ. — Մինչև ամսոյ 15ը ջերմանոցներու մէջ առէք ամենէն աւելի փափկակալմի ծաղիկները. իսկ մինչև 31ը՝ դուրսը բան մը մի թողուք: Ջերմանոցները չիւրան ստրով օրը բաց մնալ, սակայն չիւրերն զոյուելու են անպատճառ: Յատաճիկաց սմբան համար տնկեցէք և ցանեցէք յակինթ (սիւմիւլ), քրքում (սափրան), կակաշ (լոպ), հրանուկ (տիւլիւն չիւլի), թոքախոտ (թովշան գուլաղը) և հիւրիկ (մաի գեմպոք):

Յ. Մ. ԱՋՆԱՌՈՐԵԱՆ

ԱՋԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետը Սեպտ. 13ի կէս օրին ի Ս. Էջմիածին հատեր, և Սեպտ. 24 ուրբաթ օր Տաճարին մէջ արտասաններ է օրինական երգումն: Ս. Ռծումը տեղի ունեցեր է սեպտ. 26ի կիւրակէն, Վարադայ խաչի տօնին, որ ն. Վեհափառութեան վարդապետ ձեռնադրուելու օրն է: Երգեցողութեանց մասնակցեր է ծանօթ երգիչ Պ. Շահրամեանց: Կառավարութեան կողմանէ Ռծման հանդիսին ներկայ գլխաւոր է Կալկրտի կառավարչապետի խորհրդի անդամ գաղանի խորհրդական Ն. Ի. Պրիբիլ: Յաջորդ կիւրակէն, 3 հոկտ., տեղի ունեցեր է եպիսկոպոսական ձեռնադրութիւն:

— Սեպտ. 3, ուրբաթ օր, իրենց արտադրութիւններէն դառնալով Թիֆլիս ժամաներ են Սուրխաս եպիս. Պարպեանց և Ներսէս եպիս. Խիւսապէրեան, որք Սեպտ. 4ին Վեհափառ Հայրապետին ներկայանալով, Սեպտ. 5ին Վանքի տաղ. եկեղեցւոյ մէջ՝ արտադրուէն յետոյ՝ խառն բաղմութեան ներկայութեամբ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարել են Թիֆլիսի թեմի հանգուցեալ

առաջնորդ Մամբրէ եպիս. Սանատարեանի գերեզմանի վրայ, որ կը գտնուի նոյն եկեղեցւոյ բակը: Սոյն երկու եպիսկոպոսը այժմ կը գտնուին ի Ս. Էջմիածին:

— Թիֆլիսարեան կարնեցի մի պարսն, Այվազեան, սեպտ. 6ին 300 լուրի նուիրեր է երաւարդեան վանոց և 200 լուրի՝ Մշոյ Ս. Կարապետի վանոց:

— Խարբերդի վիճակին առաջնորդ ընտրուել է Տ. Պետրոս վարդապետ:

— Այնթապէն «Արեւելք»-ի կը գրեն.

«Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսի առաջական վիճակը լաւ չէ. արդէն կարաբանակ, լաւիքն ալ ծանրացած է. խօսակցութիւնը գժաւարաւ կը կատարէ: Այժմ Քերթան կը նստի: Իր տարիաւորները հեռացած են ն. Ամենապատուութեան. ամենք ամուսնացած են, ամենք գործով կ'ըրազին:

— Պետրոս Էփ. Փանոսեան շինել տուած է Սիւստարի Ս. Խաչ եկեղեցւոյ երկու սեղաններու խաչակալներն, նոյնպէս այլ երկու սեղանները խաչելով, ծաղկանոցներով, աշտանակներով ու թշնցներով զարդարած և այլ կարեւոր պէտքերը հոգացած է, 200 տկիէն աւելի գումար մը ծախսելով:

— Նարեկեան վարժարանին հոգին վրայ Էստեան եղբայր բարերարութեամբ կառուցանելի վարժարանին հիմնարկէրը տեղի ունեցաւ Սեպտ. 20, երկուշաբթի օր: Ի մօտայ տեղի պիտի ունենայ նաեւ Բերայի Ս. Յարութիւն եկեղեցւոյ հիմնարկէրը:

— Աչըզեան Տ. Խորէն Ս. Պատրիարք Սեպտ. 27 երկուշաբթի օր Եալովէն վերադառնալով, ուղղակի գնաց իւր բնակարանն ի Մարրիդիւզ: Յաջորդ օրը Կայս. Պալատ կրգալով, Վսեմ. Հաճի Ալի Պէյի միջոցաւ իւր հաւատարմական զգացմանց հաւատարմ. ու ջերմ երախտագիտութիւնը մատուց յոսս Կայս. Գահայից: Յետոյ Բ. Գուռն երթալով, այցելութիւն տուաւ նաեւ Բարձր. Մեծ-Եղարքաթին ու Եղարքաթեան Խորհրդակցութեան: Այցելէր նաեւ գաղտնական պաշտօնատուներ և Բոսիկանութեան նախարար Վսեմ. Նալբաճ Պէյին: Ապա Պատրիարքարան գալով պահ մը հանդատուեալէ յետոյ, այցելեց Երաւարդեան Պատրիարք Տ. Յարութիւն Սրբազանին և երեկոյն գործաւ ի Մարրիդիւզ, որ կը մնայ ցարդ, մերթ րնդ մերթ իջնելով Պոլիս և ժողովոյ նախադահելով:

— 75 տարեկան բարեպաշտ հայ տիկին մը՝ Բերայի Պարտուց հասուցման Յանձնաժողովոյ քով իւր ունեցած 500 տկուց դումարը վաճֆ ըրած է բարեգործական նպատակներու, հետեւեալ պայմաններով. այդ գումարին տակուն իրեն պիտի արուի մինչև ցմահ, և այնուհետեւ 250 տկի Ս. Փրկչի Հիւանդանոցին պիտի յատկացուի, 250 տկին ալ Բերայի աղքատիկ մանկուոյն գաղտնաւորակութեան, մայր գումարը միշտ նոյն

յանձնաժողովոյ մատակին մէջ պահուելով և տակաւ միայն գործածուելով նոյն երկու նպատակներուն: Այս բարեգործութիւնն օրինական ձեւի տակ առած է Շէրիի Վազֆնամէալ մը, և իւր կողմանէ Միւթէվէլլի կարգած է Էստեան Յովհաննէս Էփէնաթին, որոյ մահէն յետոյ օրուան Պատրիարքը պիտի լինի Միւթէվէլլի, յիշեալ 500 տկուցն տակուններն ընդունելու և որոշեալ ձեւով գործածելու համար:

— Սեպտ. 26, կիւրակէ օր, Մայրեկեղեցւոյ տաճարին մէջ տեղի ունեցաւ վիդայականներու բաշխումն՝ մայրաքաղաքիս թաղային վարժարանաց այս տարւոյ շրջանաւարտներուն: Ասանք էին, Մայր վարժարանէն՝ Պարմայր Յովհ. Մէհաբեան, Երաւարդ. Ռաբէնեան, Տիգրան Խաչիկեան, Վահրամ Գարբիէլեան, Մեսրոպ Գրիգորեան, Տեղեմուր Հիւրեարակէնեան ու Աշոտ Տէր-Գորգիսեան. — Սամաթիոյ վարժարանէն՝ Պարմայր Միհրան Զիթեան, Արտաշէս Միսաքեան, և Օրիսրդ Սննիկ Թիւրեան, Ազապի Նիկողոսեան:

— Խառն ժողովոյ որոշմամբ, Գարթալի Տ. Մանուէլ քահանայն ի մօտայ կրէտէ պիտի ազնուրի, պաշտօն ունենալով տեղւոյն եկեղեցին պայծառ պահել, կառուածոց մատակարարութիւնը կատարել և հոգեւորապէս միաթարել այն ազգայիններն՝ որք կը գտնուին Օսմ. Կայս. Կառավարութեան խշտանութեանը ներքեւ եղած շրջակայ կղկններու մէջ:

— Հայրապետական հրամանաւ, Գեորգեան ձեռնարանն երթեալէ աշակերտներ ևս պիտի բնդունուին այսուհետեւ:

— Տրապիզոնի Առաջնորդ Եղիշէ վարդ. Այվազեան մայրաքաղաքս եկաւ:

— Արարիկի վիճակին առաջնորդ ընտրուել է ձերմակեան Տ. Մեսրոպ վարդապետ:

— Սոյ միարան Տ. Արքահամ եպիս. Մամիկոնեան պատրիարքական հրամանաւ գաղթեցուցուած է Գումգալուի գրաի Ս. Յարութիւն եկեղեցւոյ զարգալովեան պաշտօնէն: Ս. Պատրիարքը միանդամէն արդիւր ի նմա որ և է պաշտօն վարել մայրաքաղաքիս մէջ և հրաւիրած է անցապաղ Սիւ երթալ: Պատրիարքական հրամանին համեմատ, Տ. Արքահամ Սրբազան պարտաւոր է՝ մինչև իւր մեկնումը՝ Ազգ. Հիւանդանոցի հիւրանոցն անցանել իւր ժամանակը:

— Անդրկանապոլոյ կրօն. ժողովոյ անգամ ընտրուել են Տ. Մկրտիչ Ա. քահ. Պատմական, Տ. Արմէն քահ. Դերձակեան և Տ. Խորէն քահ. Սարկաւաղեան: Քաղ. ժողովոյ անգամ ընտրուել են Սաշատուր Մէնկելեան, Կարապետ Բանթիկ, Սահակ Պարմեան, Յովհաննէս Քիւրքճեան և Կարապետ Անանեան Էփէնաթները:

— Ի Թիֆլիս վախճանեալ Յակոբ Արխաղան 49300 լուրի և Պորմի մէջ ունեցած իւր տունը կտակած էր՝ Թիֆլիսի ուսումնարանաց մէջ իւր տնտեսի 14 թուական առաւելութեամբ պահելու համար: Ռեւիոյ կրթական նախարար օգոստ. 31ին հաստատել է այն կտակը, որ շուտով գործողութեան

թեան պիտի դրուի: 14 թռակառու աշա-
կերաներէն 8 հոգին, ըստ կտակի, Հայ պիտի
լինին, 4ը Վրացի և 2ը Ռուս:

— Մոսկուաքանակ ժամհարեան եղբայր
17000 լուրի կտակեր են, այս գումարի տո-
կոսով ուսանող մը պահելու համար յետագայ:
Ստաւրպոլի մեծահարուստ ազգայիններէն
Պ. Մարգար Պոպով՝ այն տեղի եկեղեցւոյն
նախկին է իւր 20000 լուրի արժող մի տունն,
որուն եկամուտով պիտի կառավարուին տեղ-
ւոյն երկուս ուսումնարանները: Յարակիւ-կո-
ւոյն մէջ՝ իւր անձնական ծախքով նոր ու-
սումնարան մը կառուցեր է Պ. Ա. Օթարեան
անուն ազգայինն:

— Սեպտ. 26ի եկեղեցական հանդիպին
առթիւ Ս. Էջմիածին գտնուող առաջնորդ ու
առաջնորդական փոխանորդ հրաւիրուեր են
իրենց պաշտօնատեղիները վերադառնալու: Մի-
այն Մակար Ծ. վարդ. Բարխուդարեանցին
և Կարսի Առաջն. փոխանորդ Նահապետ Ա-
րեղայ Նահապետեանին հրամայում է ժա-
մանակ մը մնալ ի Ս. Էջմիածին:

— Ս. Էջմիածնայ Մատենադարանին վա-
րիչ նշանակուեր են Մեսրոպ արեղայ Տէր-
Մովսէսեան, Գորգատի Համբարանէն, և
Պ. Արշակ Տէր-Միքայէլեան, Իւնայի Համալ-
սարանէն:

— Մանչեսթրի հայ գաղթականութեան
ամենէն հին և ամենէն յարգելի անդամե-
րէն մին, Յ. Անդրէասեան, Մանչեսթր քա-
ղաքի հաշտարար դատարանի անդամակցու-
թեան որոշութիւն կոչուեր է: Այս առաջին
անդամն է՝ կարծեմք՝ որ հայ մը կ'արժանա-
նայ Անգլիայ մէջ գաւառաւորական ակումին վը-
րայ բազմելու:

— Թիֆլիսէն հայ Հախումի, Թայր-
եան, որ կառատանի մը մայրն է, Ս. Էջ-
միածին գաղթէ՝ եկեղեցական պատկեր մը
նախկին, 600 լուրի արժողութեամբ:

— Ֆիլիպիի ցուցահանդիպին այցելողները՝
պուրաբար անցնող ժամանակ մասին
մէջ սրանցապիսի պիտի մատարուի թե-
միով գտնուող վրայ բանում գեղեցիկ ա-
սեղանային ու խմոր մը, որ Պոլսէն գտն-
քային 20 ֆրանքնոյ արժէքով Նանտ-
թիւնն է՝ վրան գտնուած ստորագրութիւն-
ներով ու վարդարաններով հանդերձ, այն-
պիսի ճշգրտութեամբ որ անտեղը կրնար չի-
թել իրաւունքին հետ: Այս ձեռագործ բնակի
աշխատութեան հեղինակն է հայ աղջիկ մը,
Օր. Քրիստինէ Հինգեան, որ կը պատկանի
Ֆիլիպիի առաջնակարգ հայ բնակիչներէ մե-
կուն: Վերջերս Օր. Հինգեան գործնաւոր գա-
նալու վրայ և զոյնողն մատարել թերթով
ստեղծագործեր է 5 ստորագրող ամերիկեան
պանդուտ մը, հիմնադր յաջողութեամբ,
որ այժմ ի ցոյց դրած է Շիքապոլի Արտեա-
տահանդիպին մէջ:

— Պատրարարանին ընդունելի Ռուսաթիւն
Առաջնորդ Տ. Հմայեակ եպիս. Դիմարեանի
վերջնական հրաժարականն նոյն առաջնորդա-
կան պաշտօնէն:

ՆԱԽԱԿ ԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

17 Սեպտ. 93, խաղաղ
Լը խնդրէ՝ որ հաճեք Նախկին պատուօրման
ընթերցողաց ծանուցանել թէ՝ Ուսուցչական Ժողովոյ
վերջին նստին, 8 Սեպտ. 93, որ, կրօնի ուսուցչական
համար ըրած գրու որ տեսութեանց մէջ, ո՛չ հան-
դուցեալ Տէրայեց պատուելիին անունը յիշած եմ,
ո՛չ ալ անոր յորինած Քրիստոնէականք՝ իբր գաւա-
ղերը՝ Ազգ. վարժարանաց մէջ գործածել յանձնարա-
րած եմ:

Անոնք՝ որ կը վարանին ըսածիս ստուգութեան
հաւատարմութիւն, կրնան Ժողովին գիտնադպրեք Բէկնաթի-
ւին գիտնալ ծանուցեալ բանաբանութիւնը աչքէ ան-
ցունել:

Ռ. ԹԱԴԵՈՍԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեղիքութեան առաջին ստացու կայս.
անձնական գտնումն նախարար Վսեմ. Փոր-
թուգալ Միքայէլ էֆ.:

— Վեհ. Սուլթանը ներում շնորհած է
Մուսթաֆա անուն գաւառապետաւոր մը որ
մարդասպանութեան գործի մը համար Վա-
նայ բանտին մէջ կը գտնուէր և հիւանդ ա-
ցած էր: Ն. Վեհափառութիւնն միանգամայն
դրամական պարգև մը շնորհած է նա:

— «Ստաւէթ» մէջ կը կարդանք.
«Իմացուելով որ Կարապետ անուն անձ մը,
որ ժամանակէ մը ի վեր Սերաստիոյ Նահան-
գին և այլ տեղերու մէջ կը պաշար իրեն
կրօնաւոր, Այլիլիկի կողմն անցած է և այն
կողմերը կը թափառի, հարցում է իրեն թէ
ինչ պատճառաւ կը պաշար: Կարապետ պա-
տասխանած է թէ կրօնաւոր ըլլալուն համար
պոտյոններ կը կտտար: Իրեն ձեռքը դրու-
նուած վիշապները կտտածելի երեւնալով,
յատուկ պաշտօնէի մը հետ Սերաստիոյ գր-
կուած է: Հոն այդ վիշապները նմանորէնակ
վիշապաններու հետ բաղդատուելով, հա-
տառուած է թէ Սոյ Կաթիլիկոսին կողմնէ
վարդապետներու և քահանայներու արտած
վիշապաններու կեղծն է. հետևաբար այդ
անձ հարցաքննութեան ենթարկուած է: Կա-
րապետ շիրմով ուրանալ, բերանացի և դա-
ւար կերպով խոստովանած է թէ ինք բնիկ
Մշեցի է, օսմանեան հպատակ, հայազգի և
անունն ալ Կարապետ Տէրաստեան, և թէ
այդ կեղծ վիշապները պատարասուած է մա-
րդ մը կողմնէ որուն անունը չգիտեր, և
մէկ ու կէս սուրբ փոխարէն իրեն ծախուած
է: Այդ անձ՝ հանդերձ տեղեկագրերով յանձ-
նուած է գտնական իշխանութեան, իրեն
նկատմամբ հարկ եղած օրինական միջոցները
ի գործ դրուելու համար»:

— Սերաստիոյ գաւառական «Սրբալ»
թերթին մէջ կը կարդանք.

«Իմացուելով որ Թուրք գիւղէն անցնող
և Եւգիլիս տանող ճամբուն վրայ մէկ քանի
գինեալ մարդեր կը թափառին, կուսակալու-
թեան կողմնէ արտած բացարձակ հրամանի
մը վրայ՝ գինուորական հրամանատարին կող-
մնէ գինուորաց ջոկատ մը գրկուած է այդ
անձերը փնտալու և ձերբակալելու համար:
Իմացուելով որ ջոկատն հոն հասած ժամա-
նակ, յիշալ անձինք մէկ մէկ կողմ պահուած
են և մին ալ Գորգար գիւղն ապաստանած
է, խուզարկութիւնը կատարուած են և Սե-
րաստիոյ օսմանեան հպատակ հայազգի կոշ-
կաւար Գալուստ ձերբակալուած է: Գալուստ
յոյն ցղալ Վրացիի հազուադէպ կը կրէր և
վրան կային Չէքքի տալ մը, բնակիչ մը,
Չէքքի, յատուկ փառնուածներ, գնդակներ,
մարմինի հրացանի փառնուածներ պահելու
պայտակ մը: Յետ քննութեան հաստատ-
ուած է թէ, անցեալները կողոպտուող Տիւ-
րիկին գիւղացի Մէհմէտի գոյքերը յափշտ-
կողն ալ այդ անձն է: Գալուստ բանտարկ-
ուած և հարկ եղած տեղեկագրերը մատուց-
ուած է կուսակալութեան:

— «Ստաւէթ» մէջ կը կարդանք.

«Օսմանեան մէկ քանի Նահանգներու մէջ
բնակող հայերէն՝ չարն ու բարին որոշելու ան-
կարող կարճամիտք ոմանք, մասնաւոր թեւադ-
րութիւններէ խաբուելով, այլ և այլ տեղեր՝
քանիցս ճամբաններն ու լեռներն մարդերու
վրայ յարձակած և աւաւարութիւններ ու
մարդասպանութիւններ գործած են, Չէքքի,

Գիւրգի և իսլամական ուրիշ ազգութեանց
ձեւին տակ և անոնց տարագր կրելով: Թէեւ
ակներեւ է որ ասոնք այդ արարքին մէջ զըտ-
նուած են, նպատակ ունենալով ցոյց տալ որ
իրեն թէ Վեհ. Սուլթանի երկիրներուն մէջ
խղամ հպատակաց կողմէ անպատշաճ արարք-
ներ ի գործ կը դրուին խաղաղութիւնը վըր-
դովելու համար, սակայն ամենուն ծանօթ և
վերջերս տեղի ունեցած գաւառաւորներն մէջ
հաստատուած է որ այդ ոմաներն, ինչպէս
վերն ըսուած է, գործուած են իսլամական
կերպարանքի տակ մանող հայերու կողմէ:
Անցեալները Բայասի տեղական կառավարու-
թիւնն իմացեր է որ Այլիլի գիւղէն Թուրան-
տաօլը Գիւրգի աղջիկին Շուշան Հասան աղա
գիւղէն գաւառու առնեն, 3 Չէքքի ձեռքը
գինեք բանութեամբ փախուցեր են: Տեղական
կառավարութիւնն անմիջապէս ձեռնարկեր է
այդ անձերն հայտնելու, ինչպէս նաև խընդ-
րոյն քննութեանը, և հաստատուել է թէ այդ
աղջիկը փախցնողն ոչ թէ Չէքքի մ'է, այլ
նոյն տարագրով Օհան անուն հայ մը: Բէճէպ
աղա, որուն որոշածն յանձնուած էր հալա-
ծել այդ անձն, ազգու միջոցներ ձեռք առ-
նով ձերբակալեր է գնա Օսմանիյէ Քաւա-
սակին ձիրքա գիւղականութիւն մէջ: Օհան իւր
կրած Չէքքի տարագրով Նահանգին կեղծոր
տարուել է:

«Սրբալ» բացատրելու ձեռնարկելով կը
կրկնենք թէ բոլորովին ակներեւ եղող ճշմար-
տութիւն մը անկարելի է ծածկել՝ Հայերու
մանց կողմէ ի գործ դրուած անխառն ա-
րարքներով, և միանգամայն յառաջ կը բե-
րենք վերջերս վիշնակաւ բազրերու ոմանց
հրաւարակութիւնն, որով ճշմարտութիւնը
ծանուցած են: Աւստիկ այդ հրաւարակու-
թիւնը:

«Թուրքիոյ մէջ միս ըստ ազգաց հետ
Հայերն ալ, շնորհիւ Վեհ. Սուլթանի արդա-
րակութեան, կատարելապէս մասնակցէ են՝
եղած շնորհներուն: Ամբողջ աշխարհի առջեւ
յայտնի եղած է թէ աստ անդ մէկ քանի հա-
յերու կողմէ ի գործ դրուած թեւադրութիւնը
և եղած հրաւարակութիւնը ինչ տեսակ բան-
դադուանքներ են՝ արդիւնք թշնամական շար-
ողւոյ»:

— Յետ այսորիկ՝ վաճառականաց չղիւսի
յանձնուի կառավարութեան յատուկ անասու-
նելու մէջ ծառ կարելու և առագձ պատ-
րաստելու գործը: Անհամարու տեղահան
անասուաց համար ալ Արաբիի օրէնքին պա-
մադրութիւնը ի գործ պիտի դրուին:

— Իդրիքի Ազալայ անուն տեղը նոր մաք-
սատուն մը պիտի շինուի:

— Մալաթիոյ Հայոց թաղերու Գոճա Պա-
շանէն Յակոբ, նոյն հասարակութեան կենն գան-
ձած գինուորական և այլ տուրքերէն 60000
գրուի չարի գումար մը խրաջողած լինելով,
մէկ տարւոյ բանաւարութեան և նոյն գու-
մարին հատուցման գաւառապետներ է: Նոյն
քաղաքին հաշուակալութեան և անասուի գոր-
ծաւորութեանց մէջ գեղձումեկը գործուած
լինելով, հաշուակալ Օսման էֆ. և արիւղա-
կալ Յովհաննէս էֆ. պաշտօնէ գաղթեցուց-
ուեր են: Առաջնոյն պաշտօնը փոխանորդա-
րար յանձնուած է առաջին Քարաուզար Իսլ-
րահիմ էֆէնդիի և երկրորդին ալ՝ Պաղու-
եան Յովհաննէս էֆէնդիի:

— Բուսիլի երկաթուղեաց պարտաւորմա-
նու վերջին վիճակահանութեան 300000
ֆրանքի առաջին պարգևը Հանրային Պար-
տուց վարչութիւնը շահեր է՝ կ'ըսուի:

